ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Սեպտեմբերի 3-ին, շաբաթ.—Նիկիոյ Ս. ժողովոյն երեք հարիւր տասն և ութ հայրապետացն (325 թ.):**

Այսօր Մայր տաճարում կատարվեց յոթնօրեքի հոգեհանգստյան պաշտոն վասն հոգւոց հանգուցյալ Վազգեն Վեհափառ Հայրապետի, հանդիսապետությամբ Կաթողիկոսական Տեղապահ Նորին Ամենապատվություն Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի: Վերջում Ամենապատիվ սրբազան հայրը մխիթարական հուզիչ խոսք ասաց ներկաներին:

* * *

**Սեպտեմբերի 4-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Արգենտինահայոց թեմի առաջնորդ Տ. Գիսակ եպս. Մուրադյանը: «Հայր մեր»-ից առաջ սրբազան հայրը հանգամանալից քարոզ խոսեց:

* * *

**Սեպտեմբերի 10-ին, շաբաթ.—Սրբոյ եկեղեցւոյ ի նաւակատիս Սրբոյ Խաչին:**

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

**Սեպտեմբերի 11-ին, կիրակի.—ԽԱՉՎԵՐԱՑ:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

**Սեպտեմբերի 18-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Սեպտեմբերի 25-ին, կիրակի.—Տոն է Վարագայ Սրբոյ Խաչին:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց Հանրապետական մաղթանք՝ նախագահությամբ Կաթողիկոսական Տեղապահ Նորին Ամենապատվության Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի:

* * *

**Հոկտեմբերի 1-ին, շաբաթ.—Սրբոց եօթնասնից և երկուց աշակերտացն Քրիստոսի:**

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Գրիգոր ավ. քհն. Տերտերյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց բրշ. Վազգեն արկ. Գալստյանը:

* * *

**Հոկտեմբերի 2-ին, կրիակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Ամերիկահայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը: «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց Կ. Պոլսի Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արքեպս. Գազանճյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ նախագահությամբ Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի, վասն նորոգ հանգուցյալ Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի:

* * *

**Հոկտեմբերի 9-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր ավ. քհն. Ֆրանկյանը:

* * *

**Հոկտեմբերի 15-ին, շաբաթ.—Սրբոց աւետարանչացն՝ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու և Յովհաննու:**

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն արք. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

**Հոկտեմբերի 16-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն;

* * *

**Հոկտեմբերի 22-ին, շաբաթ.—Սրբոց երկոտասանից վարդապետացն՝ Թեթէոսի, Դիոնիսիոսի, Սեղբեստրոսի, Աթանասի, Կիւրղի Երուսաղէմացւոյն, Եփրեմի Խուրին Ասորւոյ, Բարսղի Կեսարացւոյն, Գրիգորի Նիւսացւոյն, Գրիգորի Աստուածաբանին, Եպիփանու Կիպրացւոյն, Յովհաննու Ոսկեբերանին և Կիւրղի Աղէքսանդրացւոյն:**

Այսօր Ս. Գայանե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

**Հոկտեմբերի 23-ին, կիրակի.—Գիւտ Խաչի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արտակ ավ. քհն. Սիմոնյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

**Հոկտեմբերի 29-ին, շաբաթ.—Սրբոյն Յովհաննու Ոսկեբերան հայրապետին:**

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն արղ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

* * *

**Հոկտեմբերի 30-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը: